ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«12» Դեկտեմբերի 2025թ. ՆՄՈ/964 -Ա

*Ք. Արմավիր*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ՆՄՈ/60-2021 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով.

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան մուտքագրված սոցիալական աջակցության խնդրանքով դիմումների քննարկման նպատակով հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի աշխատանքային գործունեության և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի սոցիալապես խոցելի հիմնական խմբերին աջակցություն տրամադրելու կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018 թվականի հունիսի 15-ի N44 կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՆՄՈ/60-2021 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
2. Որոշման N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,***

Восстановимая подпись

X

Արամ Գրիգորյան

***ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ*** Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 ***ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ***

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս՝ 010/28-06-46, էլ. փոստ՝ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com.

*Հավելված N 1*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2025 թվականի նոյեմբեր 12-ի*
*ՆՄՈ/964-Ա որոշման*

*«Հավելված N1*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2021 թվականի փետրվարի 23-ի*
*ՆՄՈ/60-2021 որոշման*

*ԿԱԶՄ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ*

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ա. Եղիազարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Ն.Թամրազյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ

**Անդամներ՝**

Ա.Հակոբյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Գ.Հովհաննիսյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Լ.Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Վ.Ալեքսանյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ»:

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ